

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 31

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

12.12. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Գ. Տոնոյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադրոյանը, Վ. Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

- 1.ա/ Ամանորյա միջոցառումների մասին
բ/Դպրոցներում ինֆորմատիկա դասավանդող ուսուցիչների
մասնագիտական վերապատրաստման մասին
գ/Ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների մասին
/Ա.Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին
/Ն.Սարգսյան/
- 3.Աղվերանում կայացած 2017-25թթ.ռազմավարական ծրագրի քննարկման մասին
/Հ.Թադևոսյան/
4. Մարզպետարանի և համայնքների կայքերի գործունեության մասին
/Վ.Խաչատրյան/
5. ա/Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
բ/Համայնքներում բյուջեների կազմման ծրագրերի ընթացքի մասին
/Հ.Պապոյան/
6. ա/Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման
քաղաքականության ներդրման մասին
բ/ ՀՀ Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների
մասին
/ Լ.Բերոյան/

7. Մարզի համայնքներում 2016 թվականի երրորդ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին.

/Ա.Սահակյան/

8. Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների, պարարտանյութերի բաշխման և պարտքերի հավաքագրման աշխատանքների մասին

/Գ.Հակոբյան/

9. Դեկտեմբերի 1-ին կայացած մրցույթի արդյունքի և 2016թ. դեկտեմբերի կայացած ատեստավորումների մասին

/Ա.Աղլոյան/

10. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բաղդյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բաղդյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Սահակյանին`

Մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքները քննարկել համայնքների ղեկավարների մասնակցությամբ և վերահսկել հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման գործընթացը:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

ա/Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և նախապատրաստվել 2017 թ. հունվարի 15-ից մինչև փետրվարի 1-ը ստորաբաժանման հաշվետվությունը ներկայացնելու նպատակով:

բ/ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կողմից ներկայացված, Աղվերանում անցկացված քննարկումների արդյունքների հիման վրա 2-օրյա ժամկետում նախապատրաստվել ռազմավարական ծրագրի քննարկմանը հրավիրվող փորձագետների հետ հանդիպմանը:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Խաչատրյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, Լոռու մարզպետի օգնականներ Ա.Սարգսյանին, Տ.Էվինյանին`

Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել մարզպետարանի և մարզի համայնքների կայքէջերի գործունեությանը, ինչպես նաև վերահսկել սահմանված կարգով անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության տրամադրումը :

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին`

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և հսկողություն սահմանել համայնքների և կազմակերպությունների կողմից ամանորյա միջոցառումների պատշաճ կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնի հետ համաձայնեցված աշխատանքներ իրականացնել ինֆորմատիկա առարկայի պատշաճ դասավանդման նպատակով՝ վերապատրաստումներ անցկացնելու ուղղությամբ:

8. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին՝

Երկօրյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն սերմացուների և պարարտանյութի դիմաց գանձվող գումարների հավաքագրման ընթացքի վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/